Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը՝ **ՀՀ քաղաքաշինության կոմիտե**
2. Գործուղման մասին իրավական ակտի համարը՝ ՀՀ վարչապետի 2023 թվականի սեպտեմբերի N 976–Ա որոշում
3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը)՝ Արմեն Ղուլարյան - ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահ
4. Գործուղման վայրը՝ Շվեյցարիայի Համադաշնություն(Ժնև)
5. Գործուղման ժամկետները 2023 թվականի հոկտեմբերի 3-ից 6-ը
6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը (թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն)
ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ _____

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը (ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան)

(ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը)

☐ ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

☐ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		**Ընդամենը (դրամ)**
Ճանապարհածախս	Ավիածառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս)	
	Ավիատոմսի արժեքը (դրամ)	
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով, USD)	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	

	Օրերի քանակը	
	Ընդամենը (դրամ)	
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով, USD)	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	
	Օրերի քանակը	
	Ընդամենը (դրամ)	
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար	
	Մուտքի արտոնագրի վճար	
	Այլ ծախսեր (նկարագրել)	
Ընդամենը ծախսեր (դրամ)		

Գլխավոր ֆինանսիստ՝

09/10/2023

X

ԱՐԱՄ ՄԿՐՏՉՅԱՆ
ԿՈՄԻՏԵԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
Signed by: MKRTCHIAN ARAM 2707650080

Արամ ՄԿՐՏՉՅԱՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ ԱՐՄԵՆ ՂՈՒԼԱՐՅԱՆԻ՝ ՇՎԵՅՑԱՐԻԱՅԻ ՀԱՄԱԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ (ԺՆԵՎ) ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.**

Արմեն Ղուլարյան,

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահ:

2. **Գործուղման վայրը և ժամկետները.**

Շվեյցարիայի Համադաշնություն (Ժնև), 2023 թվականի հոկտեմբերի 3-ից 6-ը:

3. **Հրավիրող կողմը.**

Միավորված ազգերի կազմակերպության (այսուհետ՝ ՄԱԿ) Եվրոպական տնտեսական հանձնաժողով (այսուհետ՝ ԵՏՀ):

4. **Գործուղման նպատակը.**

2023 թվականի հոկտեմբերի 4-ից 6-ը Շվեյցարիայի Համադաշնությունում (Ժնև) տեղի ունեցած ՄԱԿ-ի ԵՏՀ-ի քաղաքաշինության, բնակարանաշինության և հողերի կառավարման կոմիտեի 84-րդ նստաշրջանին մասնակցելու նպատակով:

5. **Քննարկված թեմաները.**

Միջոցառման շրջանակում Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) նախագահ Արմեն Ղուլարյանը ներկա է եղել մի շարք քննարկումների:

ՄԱԿ-ի ԵՏՀ-ի քաղաքաշինության, բնակարանաշինության և հողերի կառավարման կոմիտեի նախագահ Դորիս Անդոնին ելույթով ներկայացրել է նստաշրջանի օրակարգը, նախատեսվող միջոցառումները, նստաշրջանի դերը և նշանակությունը ՄԱԿ-ի ԵՏՀ-ի գործունեության մեջ:

ՄԱԿ-ի ԵՏՀ-ի գործադիր քարտուղար Տատյանա Մոլչանը նկարագրել է ՄԱԿ-ի ԵՏՀ-ի գործունեության հիմնական ուղղությունները, անդամ պետությունների միջև

համագործակցության ընդլայնման նպատակով իրականացվող ծրագրերն ու նախաձեռնությունները:

ՄԱԿ-ի Մարդկային բնակավայրերի ծրագրի (UN-Habitat) գործադիր տնօրենի տեղակալ Միխալ Մլընարը, ողջունելով մասնակիցներին, ներկայացրել է գործակալության աշխատանքները: Նշվել է, որ կառույցի գործունեությունն ուղղված է զարգացող քաղաքների ու բնակավայրերի ձևավորմանը, յուրաքանչյուր մարդու համար բնակության կացարանի ապահովմանը:

Կայուն և ներառական քաղաքաշինության և ճարտարապետության սկզբունքների վերաբերյալ Սան Մարինոյի հռչակագրի ընդունումից հետո կատարված աշխատանքների շրջանակում Շվեյցարիայի Համադաշնության Ժնևի համալսարանի դասախոսներ Ալեքսանդր Հեդջազին և Ֆրեդերիկ Ջիրաութը ներկայացրել են Ժնևի ճարտարապետության տարբեր կառույցներ որպես քաղաքաշինական պլանավորման և ներառականության օրինակներ:

«Կեցության վայրը և կյանքը ԵՏՀ-ում – տարածաշրջանային գործողությունների պլան 2030» փաստաթղթի իրականացման ընթացքի վերաբերյալ քննարկմանը ներկայացվել է պետությունների, քաղաքների, միջազգային կազմակերպությունների գործունեությունը քաղաքաշինության զարգացման և բնակարանային ապահովման գործընթացում:

Միջոցառման շրջանակում տարբեր պետությունների մասնակիցները ներկայացրել են իրենց պետություններում քաղաքաշինության, ճարտարապետության և բնակարանաշինության բնագավառներում իրականացվող աշխատանքները, ոլորտային բարեփոխումների ընթացքը և հետագա քայլերը:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

2023 թվականի հոկտեմբերի 4-ին Արմեն Ղուլարյանը հանդիպել է ՄԱԿ-ի ԵՏՀ-ի գործադիր քարտուղարի տեղակալ Դմիտրի Մարիասինի հետ, ներկայացրել Կոմիտեի գործունեությունը, ոլորտում իրականացվող աշխատանքները: Հանդիպմանը մասնակցել է նաև Կոմիտեի միջազգային համագործակցության և կառուցապատման ներդրումային ծրագրերի վարչության պետ Էրիկ Հովսեփյանը: Քննարկվել են քաղաքաշինության բնագավառում ՄԱԿ-ի ԵՏՀ-ի հետ համագործակցության հիմնական ուղղությունները, զարգացման ներուժն ու հեռանկարները:

Արմեն Ղուլարյանը ընդգծել է 2017 թվականին հրապարակված «Հայաստանի Հանրապետության բնակարանային տնտեսության և հողային ռեսուրսների կառավարման վերաբերյալ երկրի նկարագիր» փաստաթղթի վերանայման, նոր փաստաթղթի մշակման կարևորությունը: Անդրադարձ է կատարվել Հայաստանի Հանրապետության տարաբնակեցման գլխավոր նախագծի և Երևան քաղաքի գլխավոր հատակագծի մշակման շրջանակում ՄԱԿ-ի ԵՏՀ-ի հետ համագործակցությանը, մասնագիտական խորհրդատվական աջակցության տրամադրման հնարավորությանը: Դմիտրի Մարիասինը առաջարկել է դիտարկել Հայաստանի Հանրապետությունում ՄԱԿ-ի ԵՏՀ-ի գերազանցության կենտրոնի հիմնման հնարավորությունը: Մտքեր են փոխանակվել ոլորտային համագործակցության մի շարք այլ հարցերի վերաբերյալ:

2023 թվականի հոկտեմբերի 4-ին Արմեն Ղուլարյանը հանդիպել է ՄԱԿ-ի ԵՏՀ-ի քաղաքաշինության, բնակարանաշինության և հողերի կառավարման կոմիտեի նախագահ Դորիս Անդոնիի հետ: Քննարկվել են 2017 թվականին հրապարակված «Հայաստանի Հանրապետության բնակարանային տնտեսության և հողային ռեսուրսների կառավարման վերաբերյալ երկրի նկարագիր» փաստաթղթի վերանայմանն առնչվող հարցեր: Դորիս Անդոնին ընդգծել է նոր փաստաթղթի մշակման նպատակով ֆինանսական ռեսուրսների անհրաժեշտությունը, նշել, որ ՄԱԿ-ի ԵՏՀ-ն քննարկումներ կունենա անդամ պետությունների, գործընկերների հետ ֆինանսական օժանդակության տրամադրման նպատակով: Անդրադարձ է կատարվել ՄԱԿ-ի ԵՏՀ-ի քաղաքաշինության, բնակարանաշինության և հողերի կառավարման կոմիտեի բյուրոյի կազմում Կոմիտեի ներառմանը, որը կմեծացնի համագործակցության հնարավորությունները, կնպաստի նոր ծրագրերի ու նախաձեռնությունների իրագործմանը:

2023 թվականի հոկտեմբերի 5-ին շվեյցարահայ գործարար Վարդան Սերմաքեշի հետ քննարկվել են «Հին Երևան» ծրագրի իրականացման վերաբերյալ հարցեր: Անդրադարձ է կատարվել նաև քաղաքաշինության բնագավառում համատեղ ծրագրերի իրագործման և ներդրումների ներգրավման հնարավորություններին:

ՄԱԿ-ի ԵՏՀ-ի քաղաքաշինության, բնակարանաշինության և հողերի կառավարման կոմիտեի 84-րդ նստաշրջանի շրջանակում 2023 թվականի հոկտեմբերի 5-ին Արմեն Ղուլարյանը զեկույց է ունեցել «Հայաստանի Հանրապետության բնակարանային տնտեսության և հողային

ռեսուրսների կառավարման վերաբերյալ երկրի նկարագիր» փաստաթղթի շրջանակում կատարված աշխատանքների վերաբերյալ: Ներկայացվել են ոլորտում իրականացված նախագծերը, առկա ծրագրերն ու նախաձեռնությունները: Կարևորելով ներկա պահանջներն ու մարտահրավերները՝ նշվել է նոր փաստաթղթի մշակման անհրաժեշտությունը, որը կգնահատի 2017 թվականից հետո կատարված աշխատանքները, կներկայացնի նոր առաջարկություններ, կսահմանի նոր ուղղություններ քաղաքաշինության բնագավառում հետագա համագործակցության նպատակով:

2023 թվականի հոկտեմբերի 5-ին քննարկում է տեղի ունեցել ՄԱԿ-ի Մարդկային բնակավայրերի ծրագրի (UN-Habitat) միջտարածաշրջանային խորհրդատու Կատյա Սչաֆերի հետ: Անդրադարձ է կատարվել ոլորտային համագործակցության զարգացման նպատակով համատեղ ծրագրերի իրականացման, «Երկրի նկարագիր» փաստաթղթի ձևավորման նպատակով ՄԱԿ-ի Մարդկային բնակավայրերի ծրագրի կողմից ֆինանսավորման հնարավորություններին:

2023 թվականի հոկտեմբերի 6-ին ՄԱԿ-ի ԵՏՀ-ի քաղաքաշինության, բնակարանաշինության և հողերի կառավարման կոմիտեի քարտուղար Գուլնարա Ռոլի հետ քննարկվել է Կոմիտեի հետ համագործակցությամբ Հայաստանի Հանրապետությունում ՄԱԿ-ի ԵՏՀ-ի քաղաքաշինության և բնակարանաշինության գերազանցության կենտրոնի հիմնման հնարավորությունը: Գերազանցության կենտրոնների գործունեությունն ուղղված է լավագույն փորձի փոխանակմանը, բնակարանաշինության, խելացի քաղաքների կառուցման, քաղաքաշինության և հողերի կառավարման բնագավառներում հետազոտությունների, վերապատրաստման դասընթացների իրականացմանը: Գերազանցության կենտրոնների նպատակը բնակարանաշինության ոլորտում գիտելիքի փոխանցումը և կարողությունների զարգացումն է: Նման կենտրոններ գործում են մի շարք պետություններում:

Գուլնարա Ռոլը նշել է, որ Հայաստանի Հանրապետությունում գերազանցության կենտրոնի գործունեությունն ուղղված կլինի տարածաշրջանի պետությունների միջև ոլորտային փորձի փոխանակմանը և այլ պետություններում գործող գերազանցության կենտրոնների հետ համագործակցության խթանմանը: Առաջարկվել է դիտարկել Կոմիտեի և ՄԱԿ-ի ԵՏՀ-ի միջև

Փոխըմբռնման հուշագրի ստորագրման հնարավորությունը գերազանցության կենտրոն հիմնելու վերաբերյալ:

7. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

ՄԱԿ-ի ԵՏՀ-ի քաղաքաշինության, բնակարանաշինության և հողերի կառավարման կոմիտեի կողմից ընդունվել են որոշումներ և նպատակադրություններ 84-րդ նստաշրջանի շրջանակում տեղի ունեցած պանելային քննարկումների և նիստերի արդյունքների վերաբերյալ:

Մասնավորապես 2023 թվականի հոկտեմբերի 5-ին որոշում է ընդունվել դիտարկել Կոմիտեի առաջարկությունը 2017 թվականին հրապարակված «Հայաստանի Հանրապետության բնակարանային տնտեսության և հողային ռեսուրսների կառավարման վերաբերյալ երկրի նկարագիր» փաստաթղթի վերանայման, նոր փաստաթղթի մշակման վերաբերյալ:

2023 թվականի հոկտեմբերի 6-ին տեղի են ունեցել ՄԱԿ-ի ԵՏՀ-ի քաղաքաշինության, բնակարանաշինության և հողերի կառավարման կոմիտեի բյուրոյի (այսուհետ՝ Բյուրո) անդամության ընտրություններ: Քննարկումներ են տեղի ունեցել Բյուրոյի հաջորդ ընտրություններին Կոմիտեի մասնակցության, Բյուրոյի կազմում ներկայացուցչի ներգրավման վերաբերյալ:

8. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

Այցի ընթացքում համաձայնություն է ձեռք բերվել՝ շարունակել քննարկումները առկա պայմանավորվածությունների իրականացման, համագործակցության օրակարգի ընդլայնման նպատակով:

9. **Ստորագրությունը, ամսաթիվը.**

ԱՐՄԵՆ ՂՈՒԼԱՐՅԱՆ

09.10.2023 թվական